Գործ թիվ ԵԴ/8633/02/23

Վ Ճ Ի Ռ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն   Ա Ն Ո Ւ Ն Ի Ց

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը */այսուհետ՝ դատարան/*, նախագահությամբ

| | |
|---|---|
| ԴԱՏԱՎՈՐ՝ | ԱԼՖՐԵԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ |
| *Դատավարության մասնակիցներ՝* | |
| Հայցվոր՝ | <<Նարգիզյան Շին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն /պետական գրանցման համար՝ 264.110.788236, ՀՎՀՀ՝ 00128458, հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արաբկիր, Այգեկցու փողոց, տուն 36/ |
| Պատասխանող՝ | ՀՀ քաղաքաշինության կոմիտե /հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3/ |

ք.Երևան
2023թ. մայիսի 08

Գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<Նարգիզյան Շին>> ՍՊ ընկերության /***այսուհետ՝ հայցվոր***/ ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի /***այսուհետ՝ պատասխանող***/՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 06.10.2022թ-ին <<Նարգիզյան Շին>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 1 որոշումն անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին.

*Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 101, 109, 136, 189, 191, 192, 198 և 362 հոդվածներով՝ դատարանը.*

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Նարգիզյան Շին>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 06.10.2022թ-ին <<Նարգիզյան Շին>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 1 որոշումն անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին հայցը մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Դատարանի 2023թ. մարտի 14-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովումը վերացնել վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԱԼՖՐԵԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ